ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԵԼ Է ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

16.02.2021 15:10



2021 թվականի փետրվարի 16-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ **ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմված «Ռազմական գործողությունների հետևանքով տուժած անձանց հնարավոր խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ» ուղեցույցի վերաբերյալ:**

Ասուլիսի ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը ներկայացրել են նշված ուղորտի հետ կապված հիմնախնդիրները:

Ուղեցույցը միտված է 2020 թվականի Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով տուժած հայրենակիցներին իրավական աջակցություն տրամադրելուն:

Ուղեցույցը պարզ և համառոտ կերպով ներկայացնում է, թե ինչ իրավունքներ ունեն մարտական գործողությունների մասնակիցները և նրանց ընտանիքի անդամները, ովքեր իրավունք ունեն ստանալ հատուցում զինծառայողների ապահովագրության հիմնադրամից, պարզաբանում է պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների բժշկական օգնություն ստանալու կարգը, գերեվարված զինծառայողների և պատանդ վերցված քաղաքացիական անձանց և նրանց ընտանիքների անդամների իրավունքները, շահերի պաշտպանության իրավական միջոցները, տեղահանված անձանց իրավունքներն ու շահերի պաշտպանության միջոցները, օգտակար տվյալներ և այլն:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է. «Մեր դիտարկումներով, հետպատերազմյան ամիսներին հանրության կողմից ձևավորվել է նման իրավական տեղեկատվության մեծ պահանջարկ:

ՀՀ փաստաբանների պալատը իր կողմից նախաձեռնել է այդ ուղեցույցի հրատարակումը, փորձելով մեկ գրքույկում հավաքագրել այն բոլոր իրավական կարգավորումները, որոնք առնչվում են պատերազմի հետևանքով տուժած մեր հայրենակիցներին: Քաղաքացիների մոտ որևէ հարց առաջանալու դեպքում, բացի հանրային պաշտպանի գրասենյակի ռեսուրսներից, նաև ձևավորել ենք կամավոր փաստաբանների խումբ, ովքեր նույնպես

օժանդակելու են մեր հայրենակիցներին: Այսինքն, այս առումով ևս փաստաբանները գտնվում են մեր հայրենակիցների կողքին և պատրաստ են անվճար իրավաբանական օգնությամբ ուղղորդել և խնդիրների լուծման ճիշտ ճանապարհ գտնել»:

Ասուլիսի ընթացքում ներկայացվել են նաև որոշ խնդիրներ:

Մասնավորապես, նշվել է, որ համակարգված փաստահավաք աշխատանքներ չեն կատարվում: «Կարևոր հատված է: Ապագայի համար պետք է եղած փաստերը ճիշտ հավաքագրել, որպեսզի կարողանանք մեր պահանջատիրությունը ներկայացնել: Այս մասով բոլոր տեղերում ցրված աշխատանքներ են կատարվում:

Փաստահավաք աշխատանքները նպաստելու են միջազգային ատյաններում պահանջներ ներկայացնելուն, քանի որ միայն բանավոր հայտարարությունները բավարար չեն, պետք են որոշակի պահանջներին համապատասխանող ապացույցներ: Փաստաբանների պալատը պատերազմի օրերին Արցախում ավելի քան 50 օբյեկտի վերաբերյալ նյութեր է հավաքել՝ լուսանկարներով, որոշակի ձևաթղթերի վրա կատարված նկարագրություններով»,- ասուլիսի ընթացքում նշել է Արա Ջոհրաբյանը:

Ուղեցույցի որոշակի խմբաքանակ կտրամադրվի ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և իրավասու այլ մարմիններին՝ շահառուներին հանձնելու նպատակով:

Բեռնել ուղեցույցը

Բեռնել ռազմական գործողությունների հետևանքով առաջացած խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ տեղեկանքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PUBLIC RELATIONS SERVICE



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
PUBLIC RELATIONS SERVICE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
PUBLIC RELATIONS SERVICE



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })